

**Անդամ պետություններին ուղղված՝ Նախարարների կոմիտեի թիվ R (99) 19
առաջարկություն քրեական գործերով միջնորդության վերաբերյալ**

*(Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 1999 թվականի սեպտեմբերի 15-ին
նախարարների տեղակալների 679-րդ նիստում)*

Նախարարների կոմիտեն՝ Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15.բ հոդվածի դրույթների համաձայն,

նշելով ավանդական քրեական վարույթներին լրացնող կամ դրանց այլընտրանքը հանդիսացող՝ քրեական գործերով միջնորդությունը որպես ճկուն, համապարփակ, խնդիրներ լուծող, մասնակցային տարբերակ կիրառելու ուղղությամբ անդամ պետություններում տեղի ունեցող զարգացումները,

հաշվի առնելով տուժողի և հանցագործություն կատարած անձի, ինչպես նաև հնարավոր ազդեցություն կրող այլ անձանց որպես կողմ ակտիվ անհատական մասնակցությանը քրեական վարույթներում, ինչպես նաև հանրության ներգրավմանը նպաստելու անհրաժեշտությունը,

ճանաչելով տուժողի օրինական շահը՝ առավել վճռորոշ դեր ունենալու տուժողի կարգավիճակում հայտնվելու հետևանքները քննելիս, երկխոսության մեջ մտնելու հանցագործություն կատարած անձի հետ և ստանալու ներողություն ու հատուցում,

հաշվի առնելով հանցագործություն կատարած անձանց մոտ պատասխանատվության զգացման խրախուսման և նրանց հատուցման գործուն հնարավորություն առաջարկելու կարևորությունը, ինչն էլ կարող է նպաստել նրանց վերաինտեգրմանը և ուղղմանը,

ընդունելով, որ միջնորդությունը կարող է բարձրացնել հանցագործությունները կանխելու և դրանց հակազդելու, ինչպես նաև դրանց առնչվող վեճերը լուծելու գործում անհատի և հանրության կարևոր դերի մասին իրազեկությունը՝ դրանով իսկ նպաստելով քրեական արդարադատության առավել կառուցողական և նվազ պատժիչ արդյունքներին,

ընդունելով, որ միջնորդությունը պահանջում է հատուկ հմտություններ և անհրաժեշտ է դարձնում մասնագիտական կանոնագրքերի ընդունումը և հավատարմագրված վերապատրաստումը,

հաշվի առնելով քրեական գործերով միջնորդության ոլորտում հասարակական կազմակերպությունների և տեղական համայնքների կողմից ցուցաբերվելիք զգալի օժանդակությունը, ինչպես նաև պետական ու մասնավոր նախաձեռնությունների ջանքերը համակցելու և համակարգելու անհրաժեշտությունը,

հաշվի առնելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի պահանջները,

հաշվի առնելով «Երեխաների իրավունքների իրականացման մասին» եվրոպական կոնվենցիան, ինչպես նաև թիվ R (85) 11 առաջարկությունը «Քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում տուժողի կարգավիճակի վերաբերյալ», թիվ R (87) 18 առաջարկությունը «Քրեական արդարադատության պարզեցման վերաբերյալ», թիվ R (87) 21 առաջարկությունը «Տուժողներին օժանդակություն տրամադրելու և տուժողի կարգավիճակի ձեռքբերումը կանխելու վերաբերյալ», թիվ R (87) 20 առաջարկությունը

«Անչափահասների հանցավորության նկատմամբ սոցիալական արձագանքների վերաբերյալ», թիվ R (88) 6 առաջարկությունը «Միգրանտ ընտանիքներից երիտասարդների շրջանում անչափահասների հանցավորությանը սոցիալական արձագանքների վերաբերյալ», թիվ R (92) 16 առաջարկությունը «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին եվրոպական կանոնների վերաբերյալ», թիվ R (95) 12 առաջարկությունը «Քրեական արդարադատության կառավարման վերաբերյալ» և թիվ R (98) 1 առաջարկությունը «Ընտանեկան միջնորդության վերաբերյալ»,

առաջարկում է, որ անդամ պետությունների կառավարությունները քրեական գործերով միջնորդություն սահմանելիս հաշվի առնեն սույն առաջարկության հավելվածում սահմանված սկզբունքները և հնարավորինս լայնորեն տարածեն սույն փաստաթուղթը:

I. Սահմանումը

Սույն ուղեցույցը կիրառվում է բոլոր այն գործընթացների նկատմամբ, որոնց շրջանակներում տուժողին և հանցագործություն կատարած անձին հնարավորություն է տրվում, վերջիններիս ազատ արտահայտված համաձայնությամբ, անկողմնակալ երրորդ անձի (միջնորդի) օգնությամբ ակտիվ մասնակցելու հանցագործությունից բխող հարցերի լուծմանը:

II. Ընդհանուր սկզբունքները

1. Քրեական գործերով միջնորդությունը պետք է բացառապես տեղի ունենա կողմերի ազատ արտահայտված համաձայնությամբ: Կողմերը պետք է իրավունք ունենան այդպիսի համաձայնությունը հետ վերցնել միջնորդության ցանկացած պահին:
2. Միջնորդության ընթացքում քննարկումները գաղտնի են և հետագայում կարող են օգտագործվել բացառապես կողմերի համաձայնությամբ:
3. Քրեական գործերով միջնորդությունը պետք է համընդհանուր մատչելի ծառայություն լինի:
4. Քրեական գործերով միջնորդությունը պետք է մատչելի լինի քրեական արդարադատության գործընթացի բոլոր փուլերում:
5. Միջնորդական ծառայություններին քրեական արդարադատության համակարգում պետք է տրվի բավականաչափ ինքնավարություն:

III. Իրավական հիմքը

6. Օրենսդրությամբ պետք է հեշտացվի քրեական գործերով միջնորդությունը:
7. Պետք է առկա լինի քրեական գործերով միջնորդության կիրառումը սահմանող ուղեցույցներ: Այդ ուղեցույցներով պետք է մասնավորապես հասցեագրվեն միջնորդական

ծառայությանը գործերի հանձնման պայմանները և միջնորդությունից հետո գործերի ընթացքը:

8. Միջնորդության նկատմամբ պետք է կիրառվեն ընթացակարգային հիմնարար երաշխիքներ. մասնավորապես՝ կողմերը պետք է իրավաբանական օգնության և, անհրաժեշտության դեպքում, բանավոր (գրավոր) թարգմանության իրավունք ունենան: Անչափահասները պետք է դրանից բացի ծնողական օժանդակության իրավունք ունենան:

IV. Միջնորդության մասով քրեական արդարադատության իրականացումը

9. Քրեական գործը միջնորդության հանձնելու մասին որոշում կայացնելու, ինչպես նաև միջնորդության ընթացակարգի արդյունքների գնահատման հարցը պետք է վերապահվի քրեական արդարադատության մարմիններին:

10. Մինչ միջնորդությանը համաձայնելը կողմերը պետք է ամբողջությամբ տեղեկացվեն իրենց իրավունքների, միջնորդության գործընթացի բնույթի և իրենց որոշման հնարավոր հետևանքների մասին:

11. Ոչ տուժողը, ոչ էլ հանցագործություն կատարած անձը չպետք է անարդար միջոցներով հարկադրվեն ընդունելու միջնորդությունը:

12. Դատավարությունում անչափահասների մասնակցությունը կարգավորող հատուկ կանոնակարգերը և իրավական երաշխիքները պետք է կիրառվեն նաև քրեական գործերով միջնորդությանը նրանց մասնակցության նկատմամբ:

13. Միջնորդությունը չպետք է շարունակվի, եթե ներգրավված հիմնական կողմերից որևէ մեկը չի կարող հասկանալ գործընթացի նշանակությունը:

14. Գործի հիմնական փաստերը պետք է, որպես կանոն, ճանաչվեն երկու կողմերի կողմից որպես միջնորդության հիմք: Միջնորդությանը մասնակցությունը չպետք է օգտագործվի հետագա դատավարություններում որպես մեղքի ընդունման փաստ:

15. Մինչ գործը միջնորդության հանձնելը պետք է հաշվի առնվեն այնպիսի գործոնների հետ կապված ակնհայտ տարբերությունները, ինչպես օրինակ՝ կողմերի տարիքը, հասունությունը կամ մտավոր կարողությունները:

16. Քրեական գործը միջնորդության հանձնելու մասին որոշման կայացման դեպքում, պետք է նախատեսվի ողջամիտ ժամկետ, որի ընթացքում քրեական արդարադատության իրավասու մարմինները պետք է տեղեկացվեն միջնորդության ընթացակարգի վիճակի մասին:

17. Միջնորդության արդյունքում համաձայնությունների հիման վրա արդարացումները պետք է միևնույն կարգավիճակն ունենան, ինչ դատարանի որոշումները կամ վճիռները և պետք է բացառեն հետապնդումը միևնույն փաստերի առնչությամբ (ne bis in idem):

18. Եթե գործը հետ է հանձնվում քրեական արդարադատության մարմիններին առանց կողմերի միջև համաձայնության կամ նման համաձայնությունն իրականացնելու ձախողումից հետո, հետագա ընթացքի մասին որոշումը պետք է կայացվի անհապաղ:

V. Միջնորդական ծառայությունների գործունեությունը

V.1. Չափանիշները

19. Միջնորդական ծառայությունները պետք է կարգավորվեն ճանաչված չափանիշներով:

20. Միջնորդական ծառայությունները պետք է բավարար ինքնավարություն ունենան իրենց պարտականությունները կատարելիս: Պետք է մշակվեն կոմպետենտության չափանիշներ և էթիկաի կանոններ, ինչպես նաև միջնորդների ընտրության, վերապատրաստման և գնահատման ընթացակարգեր:

21. Միջնորդական ծառայությունները պետք է դիտանցվեն իրավասու մարմնի կողմից:

V.2. Միջնորդների որակավորումները և վերապատրաստումը

22. Միջնորդները պետք է ներգրավվեն հասարակության բոլոր հատվածներից և պետք է, ընդհանուր առմամբ, լավ պատկերացնեն տեղական մշակույթները և համայնքները:

23. Միջնորդները պետք է կարողանան դրսևորել միջնորդության համար անհրաժեշտ խելամիտ դատողություն և միջանձնային հմտություններ:

24. Միջնորդները պետք է անցնեն նախնական վերապատրաստում՝ մինչ միջնորդական պարտականություններ ստանձնելը, ինչպես նաև՝ ծառայության ընթացքում վերապատրաստում: Նրանց վերապատրաստումը պետք է ուղղված լինի բարձր կոմպետենտության ապահովմանը՝ հաշվի առնելով վեճերի լուծման հմտությունները, տուժողների և հանցագործություն կատարած անձանց հետ աշխատանքի հատուկ պահանջները և քրեական արդարադատության համակարգի մասին տարրական գիտելիքները:

V.3. Առանձին գործերի վարումը

25. Մինչ միջնորդության մեկնարկը միջնորդը պետք է տեղեկացված լինի գործի բոլոր փաստերին և քրեական արդարադատության իրավասու մարմինների կողմից պետք է ստանա անհրաժեշտ փաստաթղթեր:

26. Միջնորդությունը պետք է իրականացվի անկողմնակալ ձևով՝ գործի փաստերի և կողմերի կարիքների ու ցանկությունների հիման վրա: Միջնորդը պետք է միշտ հարգի կողմերի արժանապատվությունը և ապահովի կողմերի՝ միմյանց նկատմամբ հարգալից վերաբերմունքը:

27. Միջնորդը պետք է պատասխանատվություն կրի միջնորդության համար անվտանգ և հարմարավետ միջավայրի ապահովման համար: Միջնորդը պետք է հաշվի առնի կողմերի խոցելիությունը:

28. Միջնորդությունը պետք է իրականացվի արդյունավետ ձևով, սակայն կողմերի համար կառավարելի արագությամբ:

29. Միջնորդությունը պետք է իրականացվի դռնփակ:

30. Չնայած գաղտնիության սկզբունքին՝ միջնորդը պետք է համապատասխան մարմիններին կամ շահագրգիռ անձանց հայտնի ցանկացած տեղեկություն

հաստատապես հայտնի նախապատրաստվող ծանր հանցագործությունների մասին, որոնք կարող են բացահայտվել միջնորդության ընթացքում:

V.4. Միջնորդության արդյունքը

31. Համաձայնությունները պետք է կայացվեն կողմերի կողմից կամավոր կերպով: Դրանք պետք է պարունակեն միայն ողջամիտ և համաչափ պարտականություններ:

32. Միջնորդը պետք է զեկուցի քրեական արդարադատության մարմիններին ձեռնարկված քայլերի և միջնորդության արդյունքի մասին: Միջնորդի զեկույցում չպետք է ներառվեն միջնորդության նիստերի բովանդակությունը, ոչ էլ միջնորդության ընթացքում կողմերի վարքագծի մասին դատողություններ:

VI. Միջնորդության շարունակական զարգացումը

33. Ընդհանուր պատկերացումներ ձևավորելու նպատակով քրեական արդարադատության մարմինների և միջնորդական ծառայությունների միջև պարբերական խորհրդակցություններ պետք է անցկացվեն:

34. Անդամ պետությունները պետք է խթանեն քրեական գործերով միջնորդության վերաբերյալ հետազոտությունը և դրա գնահատումը: